«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Էկոլոգիական դաստիրակության նշանակությունը դպրոցում

ԱՌԱՐԿԱ **Կեսաբանություն**

ՀԵՂԻՆԱԿ Թամարա Վարդանյան

ՄԱՐԶ Շիրակ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ «Հոռոմի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Բովանդակություն

Ներածություն …….. 3

1. Էկոլոգիա հասկացությունը, նպատակը և խնդիրները …….. 5
2. Էկոլոգիական դաստիարակությունը, որպես մարդու համակողմանի զարգացման բաղադրամաս…….……..…10
3. Էկոլոգիական գիտակցության ձևավորման խնդիրները, մեթոդները և միջոցները……16
4. Էկոլոգիական վարքագծի դրսևորումները ……..18
5. Բնապահպանական խնդիրները Հայաստանում ……..22

Եզրակացություն ……27

Գրականություն……...29

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Էկոլոգիան հին հունարենից թարգմանաբար նշանակում է գիտություն տան մասին: Էկոլոգիա հասկացության հիմքում ընկած է բնությունը, նրա հավասարակշռության պահպանությունը, որը շատ վաղուց է սկսված, իսկ նոր ժամանակներում այն դարձել է կենտրոնական հարց, համամարդկային հիմնախնդիր, որով զբաղվում է ամբողջ մարդկությունը:

Բնապահպանական հիմնախնդիրների որոշման և այդ ուղղությամբ միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ է օգտագործել բնության մասին գիտության լայն համալիրը, քանի որ պահպանության են ենթակա ընդերքը, հողը, ջուրը, օդը, բուսական և կենդանական աշխարհը: Բնության պահպանության հիմնական խնդիրն է՝ մարդու ազդեցությունը շրջակա միջավայրի վրա այնպես իրականացնել, որ հնարավոր լինի առավել բազմակողմանի և շարունակաբար օգտագործել բնական պաշարները:

Բնության պահպանությանը մասնակցում են նաև դպրոցականները: Հարցն այդպես է դրված.

-Եթե ուզում եք, որ մեր մոլորակը և ժողովուրդները գոյատևեն, ապա յուրաքանչյուր մարդ, յուրաքանչյուր դեռահաս, պատանի, երիտասարդ շրջակա միջավայրի պահպանությունը պիտի դարձնի իր սուրբ պարտականությունը:

Մարդու աշխատանքային գործունեության հետևանքով շրջակա միջավայրը կարող է խաթարվել երկու դեպքում.

ա) երբ մարդը բնությունից կորզում և օգտագործում է ոչ այնքան, որքան կարելի է, և ոչ այնտեղ,որտեղ կարելի է,

բ) Երբ մարդը բնությանն է վերադարձնում արտադրության այնքան թափոններ և այնքան քանակով,որ բնությունը չի հասցնում ‹‹մարսել›, այսինքն չի կարողանում ինքնամաքրվել: Երկու դեպքում էլ տեղի է ունենում էկոլոգիական ճգնաժամ,ապա նաև աղետ:

Շրջակա միջավայրի պահպանությանը իրենց գործուն մասնակցությունը պետք է ունենան՝ դպրոցը, ընտանիքը և ողջ հասարակությունը: Այս գործում մեծ է հատկապես դպրոցի դերը, քանի որ այստեղ է իրագործվում կազմակերպված, պլանավորված դաստիարակությունը:

Փաստացի օրինակներով պետք է հասկացնել սովորողներին, թե ինչու պահպանել բնությունը: Այսպես՝ ուսուցիչ-դաստիարակը իր աշակերտներին պարզաբանում է, որ մարդն առանց թթվածնի կարող է ապրել երկու րոպե, իսկ առանց ջրի երեք օր: Պատմում է, որ արդյունաբերության արտանետումների հետևանքով վերջին տարիներին մթնոլորտի ջերմությունը բարձրացել է 0,5°-ով, որի հետևանքները կարող են ողբերգական լինել: Օզոնի շերտը կարող է ճեղքվել և արեգակի վնասակար, սպանիչ ճառագայթները կթափանցեն երկրի կենսոլորտը և աղետի պատճառ կդառնան: Մեր օրերում մթնոլորտը աղտոտում են ատոմային էլեկտրակայանների վթարները, ցինկի, կապարի, սնդիկի արդյունաբերությունը և այլն:

1. էկոլոգիա հասկացությունը, նպատակը և խնդիրները

Մարդկային գործունեության համերկրային հետևանքները լի են էկոլոգիական ճգնաժամերով և աղետներով: Ամբողջությամբ վերցրած՝ մարդը ներկայումս իր կարիքների համար օգտագործում է էկոհամակարգերի կենսազանգվածի 10% և դրան զուգահեռ ոչնչացնում է ևս 30%-ը, որը հանգեցնում է էկոլոգիական ճգնաժամերի: Բնական տարերային երևույթների ազդեցության տակ (կլիմայի փոփոխություն, ջրհեղեղներ, երաշտ, երկրաշարժեր, ցունամի) կենսոլորտում էկոլոգիական հավասարակշռության խախտման հետևանքով տեղի է ունենում էկոլոգիական համակարգերի ոչնչացում: Ժամանակակից էկոլոգիական ճգնաժամի հատկանիշներն են համարվում՝

ա) կենսոլորտի վտանգավոր աղտոտում,

բ) էներգետիկ պաշարների սպառում,

գ) տեսակային բազմազանության կրճատում:

Այն, որ ժամանակակից էկոլոգիական ճգնաժամը համարվում է գիտատեխնիկական հեղափոխության հակառակ երեսը, հաստատում են այն փաստերը, որ Երկրի վրա առաջացել են հզոր էկոլոգիական աղետներ, Արալյան ծովի չորացումը, արևադարձային անտառների հատումը, Չեռնոբիլի(1986թ) և Ֆուկուսիմայի (Ճապոնիա 2011թ) ԱԷԿ-երի տեխնիկական աղետները, մեր օրերում գործող անտառային հրդեհները, ցունամիները, ջրհեղեղները և այլն: Էկոլոգիական աղետը բնության հավասարակշռության խախտման, բնության իրավիճակի անկայունացման երևույթ է, որը աղետներ է բերում բնակչության շրջանում: Աղետները ծագում են ինչպես բնության հզոր երևույթներից, այնպես էլ մարդու կողմից: Խախտելով բնության իրավիճակը՝ նրա անբարենպաստ փոփոխությունները հանգեցնում են կենդանի օրգանիզմների գոյության պայմանների վատացման, նրանց մասսայական հիվանդությունների և մահացության: Աղետները համաերկրային բնույթ են կրում և վտանգի տակ են դնում մարդու հետագա գոյությունը Երկրի վրա: Համաերկրային էկոլոգիական ճգնաժամերն ու աղետները կանխելու համար Երկրի ողջ բնակիչները

պարտավոր են հսկայական ջանքեր գործադրել: 21-րդ դարի էկոլոգիան ուսմունք է մարդկության գոյատևման և կայուն զարգացման ուղիների մասին: Պետք է գիտակցել, որ մարդն իր շարունակական գոյության համար կախված է այն միջավայրի բարվոք վիճակից, որտեղ ինքը ծագել ու զարգացել է, որ այսօր այդ միջավայրի կենսաքիմիական փոփոխությունները կարող են մահացու լինել նրա համար: Այս կամ այն գործոնի՝ օրինակ ճառագայթահարման նկատմամբ մարդու օրգանիզմի դիմացկունության աստճանը զգալի չափով ցածր է, քան կարիճինը, խավարասերինը, կրիայինը և ուրիշ այլ տեսակներինը: Հնարավոր է, որ բազմաթիվ այլ տեսակներ շարունակեն իրենց էվոլյուցիան այն ժամանակ, երբ շրջակա միջավայրը մարդու համար կլինի մահաբեր: Գլոբալ մասշտաբներով էկոլոգիական հիմնախնդիրների լուծումն անհնարին է առանց ժամանակակից տիրող էկոլոգիական գիտակցության փոփոխության: «Էկոլոգիական գիտակցություն» տերմինն ավանդաբար նշանակում է «մարդ-բնություն» համակարգում, բնության ներսում փոխադարձ կապերի բարելավում, բնության նկատմամբ գոյություն ունեցող վերաբերմունքի բարելավում, ինչպես նաև տեխնոլոգիայի և ռազմավարության գիտակցական մոտեցում, վերը նշված բոլոր պատկերացումների ամբողջություն: «Էկոլոգիական գիտակցության» ձևավորումը հիմնականում իրականացվում է աճող սերնդի կրթադաստիրակչական աշխատանքում, ըստ կրթական համակարգի տարբեր օղակների: Էկոլոգիական գիտելիքների ձևավորման չափանիշներն են կենդանական, բուսական և անկենդան աշխարհի մասին տեղեկությունները:

Մարդկային հասարակությունը իր զարգացման ներկա փուլում բախվել է էկոլոգիական գլոբալ խնդիրների հետ: Շատ փիլիսոփաներ,գիտնականներ, քաղաքագետներ, իրենց աշխատություններում վերլուծում են պատճառները և ելք են որոնում էկոլոգիական ճկնաժամից դուրս գալու համար:

Բնապահպանական խնդիրների լուծման համար բավարար չէ բնօգտագործման գործընթացների իրավական և տնտեսական կարգավորումը, այլ անհրաժեշտ է մարդկային գործունեության մեջ նոր արժեքա-նորմատիվային հարաբերությունների յուրացում,որը հնարավորություն է ստեղծում էկոլոգիական աշխարհայացքի ձևավորման համար:

Կարելի է ասել,որ դաստիարակությունը կոչված է ոչ միայն անցյալի արժեքները փոխանցելու, այլև դպրոցականներին նախապատրաստելու ապագայի ստեղծագործական ընկալմանն ու կերտմանը: Դաստիարակությունը առաջին հերթին պետք է ապահովի համապատասխան ունակությունների, արժեքային կողմնորոշումների, վարքագծի և բնություն աշխարհի նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ձևավորումը:

Ներկա ժամանակում գնալով խորանում են ինչպես գլոբալ,այնպես էլ տարածաշրջանային և տեղային բնապահպանական հիմնախնդիրները, որոնք արտահայտվում են հասարակության և բնության կապերի համակարգում հակասությունների սնմամբ:

Մի շարք գիտնականներ (Վ.Ա. Կոպտյուգ, Ի.Դ. Լապտեև, Ն.Դ.Ռեյմերս) էկոլոգիական հիմնախնդիրներն են համարում՝

1. կենսոլորտային կենսաբազմազանության կրճատումը,
2. մարդկանց առողջական վիճակի վատացումը,
3. շրջակա միջավայրի աղտոտումը արդյունաբերական թափոններով, լրացուցիչ էներգիայով և տեղեկատվությամբ,
4. կենսոլորտի կենսաբազմազանության կրճատումը:

Նշված հիմնախնդիրները չեն կարող շրջանցել կրթության ոլորտը:

Դիտարկելով մարդու էկոլոգիական աշխարհայացքի և էկոլոգիական մշակույթի խնդիրը՝ մենք անցնում ենք նրա հոգևոր ներաշխարհը,ներխուժում նրա՝ հասարակության հետ ունեցած հարաբերությունների ոլորտը, ընդհարվում նրա պարտականությանը՝ նրա այսօրվա իր վարքագիծը ստորադասելով ապագա սերունդների ապահովման խնդիրը:

Գիտամանկավարժական գրականության մեջ բնապահպանական դաստիարակության նպատակը սահմանվում է .

1. Բնության ,նրա հարստության,շրջակա միջավայրի նկատմամբ խնայողական և հոգատար վերաբերմունքի ձևավորում:
2. Անձի ակտիվ կենսադիրքի մշակում, որը դրսևորվում է բնության նկատմամբ գիտակցական վերաբերմունքի մեջ, որպես ամենօրյա վարքի կանոն:

Սակայն այս սահմանումները լիարժեքորեն չեն արտահայտում էկոլոգիական դաստիարակության բովանդակությունն ու նպատակը: ԵՎ միանգամայն օրինաչափ է, որ էկոլոգիական դաստիարակության կարևորագույն նպատակը անձի կողմից բնության և հասարակության փոխազդեցության սոցիալական իդեալի ըմբռնումն է , քանի որ էկոլոգիական դաստիարակության գործընթացը մի շարք անձնային ընկալումների հետ իր մեջ ներառում է ‹‹մարդ-բնություն-հասարակություն›› համակարգի իմացական տեսական մոդելը և բնության նկատմամբ անձի պատասխանատվության և հուզակամային որակների ձևավորումը:

Էկոլոգիական դաստիարակության նպատակը կարելի է դիտարկել տարբեր տեսանկյուններից՝

ա) սոցիալական,որն արտահայտում է հասարակության պահանջը դաստիարակության նկատմամբ,

բ)անհատական-անձնային, որին հասնելու համար կարևոր նշանակություն է ձեռք բերում անձի էկոլոգիական գիտակցության էկոկենտրոն տեսակը, էկոլոգիական մտածողության և էկոլոգիական պատասխանատվության ձևավորումը:

Էկոլոգիական դաստիարակությունը մանկավարժական գործընթացի մի մասն է, և նրա համալիր բնույթից էլ բխում են նրա հիմնախնդիրները.

● ‹‹մարդ-հասարակություն-բնություն›› ամբողջական համակարգի նկատմամբ դպրոցականների անհատական վերաբերմունքի, բնության հետ շփվելու պահանջմունքի, պատասխանատվության և էկոլոգիական աշխարհայացքի ձևավորում:

● նրանց անձնական մասնակցությունը այդ համակարգի գործունեությանը,

● էկոլոգիական գիտակցության և էկոլոգիական կուլտուրայի ձևավորում,

● բնության հետ հարաբերությունների կարգավորում,

● բնապահպանական գործունեության դրդապատճառների և դիրքորոշումների ձևավորում՝ ուղղված բնության բազմակողմանի արժեքների գիտակցմանը,

- բնության խնայողության անհրաժեշտության համոզմունքների ձևավորում,
- իր և ուրիշների առողջության՝ որպես հասարակական արժեքի պահպանման նկատմամբ հոգատար վերաբերմունքի ձևավորում,
- էկոլոգիական իրադրության ամբողջական պատճառահետևանքային վերլուծություն,
- էկոլոգիական գաղափարների քարոզչություն,
- շրջակա միջավայրի գեղագիտական ընկալում և գնահատում:

Դպրոցականների էկոլոգիական դաստիարակության գործընթացն իրականացնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել նրա առանձնահակությունները.

ա) բազմատեսանկյունությունը

բ) համալիրությունը

գ) անձնային-անհատական բնույթը:

Այսպիսով էկոլոգիական դաստիարակությունն ուղղված է դպրոցականների մեջ բնության, շրջակա միջավայրի մասին հասկացությունների ձևավորմանը, գիտելիքների հարստացմանը, բնության հետ ներդաշնակվելու ձգտման որակների դաստիարակման, դա էլ իր հերթին հարստացնում և ապահովում է ընդհանուր դաստիարակության ողջ գործընթացը: Այն պետք է իրականացնել սկսած վաղ մանկական տարիքից՝ ընտանիքում, նախակրթական հաստատություններում, հանրակրթական դպրոցներում և արտադպրոցական հիմնարկներում:

Դպրոցականների էկոլոգիական դաստիարակության իրականացման առաջնային գործոնը էկոլոգիական կրթությունն է, որը տրվում է ուսումնական առարկաների՝ բնագիտության, բուսաբանության, կենսաբանության, աշխարհագրության, գրականության և այլ առարկաների միջոցով:

Երկրորդ գործոնը՝ բնության, շրջակա միջավայրի ուսումնասիրման բնապահպանական հատուկ խմբերում և ընկերություններում:

Էկոլոգիական դաստիարակության խնդիրներն են.

ա) դպրոցականների կողմից այն առաջատար գաղափարների և հիմնական հասկացությունների և գիտելիգների յուրացումը, որոնց հիման վրա բնության օրենքներին համապատասխան որաշակիացվում է մարդու ներգործությունը բնության վրա,

բ) բնության սոցիալ-տնտեսական, առողջարահիգենիկ և հոգևոր գեղագիտական արժեքների իմացությունը,

գ) սովորողների բնաճանաչողական ընդունակությունների, բնապահպանական կարողությունների և հմտությունների ձևավորումը և զարգացումը,

դ) բնական միջավայրի ստեղծագործական վերափոխման ունակությունների մշակումը՝բնության հավասարակշռությունը վերականգնելու առումով, բնապահպանական գաղափարների քարոզչությունը,

ե) բնության նկատմամբ ակտիվ դիրքորոշման, վարքի նորմաների պահպանումը, պարտքի և պատասխանատվության զգացման պատվաստումը:

2. Էկոլոգիական դաստիարակությունը, որպես մարդու համակողմանի զարգացման բաղադրամաս

1970-ական թվականներին առանձին գիտնականներ պնդում էին, որ անձի համակողմանի ու ներդաշնակ զարգացումը կարելի է իրականացնել դաստիարակության ընդհանուր համակարգի երեք բաղադրամասերով. գաղափարական, բարոյական և աշխատանքային, որը իհարկե, հեռու է ճշմարտություն լինելուց: Առաջնորդվել նման կոնցեպցիայով կնշանակի. առաջին՝ աղճատել դաստիարակության բովանդակությունը, երկրորդ՝ կտրատել դաստիարակության ընդհանուր համակարգի օրինաչափ կապերը, երրորդ՝ արհեստականորեն խոչընդոտել դաստիարակության մյուս բաղադրամասերի ուղղությամբ կրթվելու, դաստիարակվելու, զարգանալու՝ դպրոցականներին ընձեռնված

հնարավորությունները, չորրորդ՝ դաստիարակության նկատմամբ չունենալ համալիր մոտեցում կամ ուղղակի հրաժարվել այդ գաղափարից:

Մշտապես պետք է իմանալ, որ անձի համակողմանի ու ներդաշնակ զարգացումը ենթադրում է աճող սերնդի մտավոր, բարոյական, աշխատանքային, գեղագիտական, ֆիզիկական, իրավական, տնտեսագիտական, էկոլոգիական դաստիարակություն: Որպեսզի անձը նշված ուղղություններով ունենա և՛ զարգացվածություն, և դաստիարակվածություն, կարևոր է, որ այդ երկուսը ներդաշնակված լինեն մարդու անձի մեջ: Ահա սա է առաջատար նպատակը:Այդ են հաստատում աշխարհի առաջադեմ մանկավարժները, հոգեբանները, սոցիոլոգները, փիլիսոփաները, ընդհանրապես բոլոր մեծ մտածողները:

Գիտատեխնիկական առաջընթացի ներկա ժամանակաշրջանը, որը առաջ է բերել բնության հավասարակշռության աննախադեպ խախտումներ, կենսոլորտի հետագա զարգացումը կախման մեջ է դնում մարդուց:

Այսօր, առավել քան երբևիցե, մարդկությանը անհրաժեշտ է ազատագրվել բնության ուժերի դեմ պայքարողի՝ բնության տիրակալի բարդույթից:

Գիտնականների կարծիքով, էկոլոգիական կրթությունն ու դաստիարակությունը այն հիմնական ոլորտներն են, որով հնարավոր է փոխել մարդու կողմից բնության նկատմամբ այդպիսի մոտեցումը, և որի շնորհիվ մարդը կարող է հասնել աշխարհի կայուն զարգացման: Ժամանակակից աշխարհը ապրում է իր զարգացման ծանր շրջանը: Տեխնոկրատական քաղաքակրթությունը հակասությունների մեջ է մտել բնության օրենքների հետ՝ օգտագործելով բնությունը, մարդը գերագնահատել է կենսոլորտի հնարավորությունները՝ կորցրածը վերականգնելու առումով:

Շրջակա միջավայրի վիճակի այդպիսի գիտակցումը գիտելիքների տարբեր բնագավառների մասնագետներին բերեց այն եզրակացության, որ էկոլոգիական ճգնաժամը, ըստ էության, կրում է աշխարհայացքային, հոգևոր-բարոյական բնույթ:Իսկ դա նշանակում է, որ էկոլոգիական աղետի վիճակից դուրս գալու առաջին պայմանը սովորողների մոտ բնության անաչառության վերաբերյալ ունեցած պատկերացման և բնությունը, որպես զուտ կենսապահովման միջոց դիտարկելու արժեքային կողմնորոշման վերափոխումն է:

Այսօր ընտանիքի, նախադպրոցական հաստատությունների, դպրոցի խնդիրը պետք է լինի երեխայի գիտակցությանը հասցնել այն գաղափարը, որ յուրաքանչյուր մարդ բնության հետ կապված է անտեսանելի թելերով և լրիվ կախված է նրանից ոչ միայն կենսաբանական, այլև հոգևոր առումով և պետք է նրանից ընդօրինակի ներդաշնակությունը, ռիթմը, համաչափությունը, նպատակահարմարությունը, բարությունը և այլն, որպեսզի նրանք գիտակցեն, որ իրենցից յուրաքանչյուրը բնության մի մասնիկ է և պետք է ենթարկվի այն կարգ ու կանոնին, որը տիրում է բնության մեջ: Շրջակա միջավայրը բոլոր մարդկանց հոգածության առարկան պետք է լինի, և նրա բարեհաջող վերականգնման համար բոլորը անձնական պատասխանատվություն են կրում:

Սովորողների մեջ շրջակա աշխարհի հետ փոխհարաբերության կուլտուրայի պատվաստման գործում գլխավոր դերը պատկանում է դաստիարակությանը, որն ապահովում է անձի հոգևոր-բարոյական հասունացումը՝ նպաստելով նրա՝ բնության հետ ունեցած հարաբերությունների ներդաշնակությունը և որոշում հասարակության սոցիալ-մշակութային զարգացման հեռանկարները: Էկոլոգիական դաստիարակությունը չի կարողկիրառվել սոցիալ-մշակութային տեսանկյունից դուրս, քանի որ մարդու փոխգործունեությունը բնության և սոցիալական միջավայրի հետ միշտ արտացոլում է մշակույթի այն տեսակը, որի կրողը նա է: Ահա թե ինչու առանց բնօգտագործման (մշակույթի, կուլտուրայի) փոփոխության չի կարելի սպասել կենսոլորտում դրական փոփոխությունների: Մշակույթը դա մարդու կենցաղի այն բնագավառն է, որտեղ պետք է փնտրել էկոլոգիական հիմնախնդիրների պատասխանները, քանի որ նրա հիմնավորման մեջ է ընկած բնության իմաստավորման արժեքները:

Դաստիարակության հիմնական գործառույթը կայանում է նրանում, որ աճող սերնդին փոխանցի մշակութային այն արժեքները, որոնք կուտակվել են նախորդ սերունդների կողմից և մասնակցությունը յուրաքանչյուրի մշակութային փորձի ձևավորմանը, որը էկոլոգիական իմաստով հասունացնում է անձի շրջակա բնական և սոցիալական միջավայրի հետ ունեցած փոխհարաբերություններում՝ իմացական հուզազգացմունքային և նորմատիվային մակարդակներում: Արդյունքում՝ դաստիարակության օբյեկտը՝ անձը, բնօգտագործողի իր դիրքորոշումը փոխում է բնապահպանական դիրքորոշման՝

հաղթահարելով այն բարդույթը, որ կողմնորոշված է մարդու՝ բնության վրա ունեցած մեծ ազդեցությամբ:

Գիտականների մեկ ուրիշ խումբ էկոլոգիական դաստիարակության հիմնական նպատակը դիտում է որպես անձի էկոլոգիական գիտակցության և մտածողության, էկոլոգիական կուլտուրայի, բնության նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի զարգացում, ինչպես նաև բնօգտագործման գործնական փորձի ձևավորում և տեղյակություն, ճիշտ որոշումների ընդունում, որը և կնպաստի մարդկանց առողջ կենցաղի կայուն սոցիալ-տնտեսական զարգացմանը, երկրի էկոլոգիական անվտանգությանը:

Ա.Ա. Վերբիցկին էկոլոգիական կրթություն ասելով հասկանում է մարդու կողմից էկոլոգիական կուլտուրայի յուրացում դաստիարակության և ինքնակրթության միջոցով, ինչպես նաև կենցաղային և աշխատանքային գործունեության շրջանակներում: Իսկ անընդմեջ էկոլոգիական կրթության նպատակը նա համարում է էկոլոգիական կուլտուրայի հարստացումը ամբողջ կյանքի ընթացքում:

Մենք գտնում ենք, որ էկոլոգիական դաստիարակությունը ավագ սերնդի կողմից դաստիարակության, կրթության, բարոյական որակների ու հոգևոր այլ արժեքների փոխանցում է, նրանց մեջ ձևավորելու բնության նկատմամբ պատասխանատու վերաբերմունք, բնօգտագործման կարողությունների ու հմտությունների ձևավորման առողջ կենսաձևի մշակման նպատակով: Էկոլոգիական դաստիարակության հիմնական նպատակը դառնում է բնության նկատմամբ արժեքային ճիշտ կողմնորոշումների, բնապահպանական ընդունակությունների, պատասխանատու վերաբերմունքի, բնության մեջ ճիշտ վարքագծի ունակությունների դրսևորումը և էկոլոգիական կուլտուրայի ձևավորումը: Այսինքն՝ էկոլոգիական դաստիարակություն ասելով հասկանում են անձի ուսուցման, դաստիարակության և զարգացման գործընթացների ամբողջական միասնությունը, որը նպատակաուղղված է աճող սերնդի էկոլոգիական կուլտուրայի և աշխարհայացքի ձևավորմանը:

«Էկոլոգիական գիտակցություն», «էկոլոգիական մտածողություն», «էկոլոգիական կուլտուրա» հասկացությունները նոր են և դեռևս ձևավորման ընթացքի մեջ են, որոնք խնդրառում են նոր բացատրություններ:

Էկոլոգիական կուլտուրան, որպես դաստիարակության հետևանք, չպետք է ընկալել որպես զուտ արտաքին ներգործություն: Էկոլոգիական կուլտուրայի տիրապետող մարդը տարբերվում է բնության հետ ներդաշնակության հասնելու ոչ միայն իր արտաքին աշխարհով, այլև իր ներքին աշխարհով:

Այսօր, երբ բազմաթիվ գործոնների ազդեցության հետևանքով կորչում են բարոյական շատ արժեքներ, և հասարակությունը կարիք է զգում իսկական արժեքների, պետք է հենվել բնահարմարության, ճշմարիտ արժեքների գերակայության վրա, որով կարելի է որոշել իսկական էկոլոգիական կուլտուրա ունեցող անձին: Միայն կուլտուրայի միջոցով է հնարավոր մարդկանց գործունեության համապատասխանեցումը կենսոլորտի և կյանքի սոցիալական օրենքներին:

Էկոլոգիական կուլտուրա ունեցող մարդը առաջին հերթին հասնում է ներդաշնակության ինչպես իր ներաշխարհի, այնպես էլ արտաքին աշխարհի հետ: Ավագ դպրոցական տարիքում այդ ունակությունը ձևավորվում է հիմնական հատուկ գիտելիքների, հուզական ոլորտի և էկոլոգիական գործունեության կարողությունների զարգացման հաշվին:

Մարդուն շրջապատող աշխարհը բազմաձև և բազմադեմ է, դա ոչ միայն բնական և սոցիալական աշխարհն է, այլ արվեստի, տեղեկատվության, տեխնիկայի, բարձր տեխնոլոգիաների, բառերի աշխարհն է: Այդ աշխարհներից յուրաքանչյուրի հետ ավագ դպրոցականը այնպիսի հարաբերություններ պետք է ստեղծի, որոնք նրան հնարավորություն կտան՝ ներդաշնակ ապրելու դրանց հետ: Հաճախ այդ հարաբերությունները տարերային են, և այդ ժամանակ դեռահասը դասեր է առնում դասից՝ հաղթահարելով սեփական սխալները: Կարելի է ասել ավագ դպրոցականները մարդկանց, բնության հետ շփվելու դասեր են առնում ծնողներից, ուսուցիչներից, որոնք փոխանցում են իրենց կենսափորձը: Սակայն հաճախ ավագ սերնդի էկոլոգիական արժեքների փորձը միշտ

չէ, որ համապատասխանում է նոր ժամանակի պահանջներին: Չե՞ որ շատ սերունդներ դաստիարակվել են բնության նվաճողի, սպառողի ոգով:

Էկոլոգիական դաստիարակության պրակտիկան ցույց է տալիս, որ ավագ դպրոցականների էկոլոգիական գիտելիքների ձևավորումը իրականացվում է կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության դասերին:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ոչ բոլոր սովորողներն են սիրում նշված առարկաները և էկոլոգիական տեղեկատվություն կրող նյութերի նկատմամբ նրանց ցածր հետաքրքրությունը բացատրվում է ոչ միայն նրանով, որ այն չի համապատասխանում սովորողների հոգեկան պահանջմունքներին, այլ նաև նրանով, որ այդ նյութերը ուսուցիչների կողմից մատուցվում են ձևական, առանց հատուկ շեշտվածության և նպատակաուղղվածության: Այդ պատճառով էլ ավագ դպրոցականների էկոլոգիական գրագիտության հիմնական բովանդակությունը կազմում են միայն բնության վրա մարդու բացասական ազդեցության վերաբերյալ գիտելիքները:

Հայ դպրոցներում էկոլոգիական կրթությունը և դաստիարակությունը գտնվում են անբավարար վիճակում:

Մարդու ներթափանցումն ինքնակարգավորվող կենսոլորտի համակարգի մեջ, որը ձևավորվել է միլիոնավոր տարիների ընթացքում, նրանից առանձնահատուկ գիտելիքներ, զգուշություն, շրջակա միջավայրի անվտանգությունը երաշխավորող կանխատեսման բարձր հնարավորություններ է պահանջում: Ահա՛ թե ինչու էկոլոգիական կրթության և դաստիարակության հետագա խթանումը, վերջինիս տեսական նոր մակարդակի բարձրացումն օրվա հրամայական է դառնում:

Կարելի է ասել, որ էկոլոգիական դաստիարակությունն ու կրթությունը մարդուն մարդկայնացնելու, նրան ինքն իրենից փրկելու, անասնական բնազդներից՝ սպանելու, ավերելու, կույր մոլուցքներից ազատագրելու նպատակ է հետապնդում:

Էկոլոգիական դաստիարակությունը, որպես պարտադիր պայման, ելնում է տվյալ ազգային հանրության, կոնկրետ դեպքում՝ հայ ժողովրդի տարածաշրջանային-

էկոլոգիական, ազգային-էթնիկական, մշակութային առանձնահատկություններից ու հոգեկերտվածքից:

3.Էկոլոգիական գիտակցության ձևավորման խնդիրները, մեթոդները և միջոցները

«Էկոլոգիական գիտակցություն» հասկացության ներբովանդակային բնութագիրը փորձել են տալ ռուս գիտնականներ Ս.Դ. Դերյաբոն, Ե.Խ. Եվտուշենկոն, Ի.Դ. Զվերևը և ուրիշներ: Նրանցից յուրաքանչյուրը տվել է «էկոլոգիական գիտակցություն» հասկացության առանձին բաղադրիչների գիտական բնութագրումը, սակայն մինչ այսօր, դեռևս այդ հասկացությանը լիարժեք սահմանում չի տրված, և հիմնահարցը կարիք է զգում խոր գիտական բացահայտման:

«Էկոլոգիական գիտակցություն» հասկացությունը կարևոր աշխարհայացքային դեր է կատարում:

Երկար տարիների մանկավարժական փորձից և գիտական հետազոտությունների արդյունքներից՝ փորձենք տալ «Էկոլոգիական գիտակցության» հասկացության սահմանումը: Էկոլոգիական գիտակցությունը հոգեկան երևույթ է, որը իրենից ներկայացնում է անձի՝ «մարդ-բնություն-հասարակություն» հարաբերակցության, նրանց բազմաբնույթ կապերի, շարժման ու փոխներգործության օրենքների օրինաչափությունների մասին գիտելիքների, հայացքների, համոզմունքների համակարգը և որը հիմք է ծառայում բարոյական վարքի արժեքային դիրքորոշումների, բնության ընկալման, բնապահպանական ու բնաճանաչողական ընդունակությունների, վարքագծի ձևավորման համար: Էկոլոգիական գիտակցությունը ձևավորվում է ոչ միջնորդավորված՝ տարերայնորեն և միջնորդավորված՝ նպատակադրված դաստիարակության ու կրթության միջոցով:

Անձնային տեսանկյունով՝ էկոլոգիական աշխարհայացքը ձևավորվում է անձի էկոլոգիական գիտակցության ձևավորման և նրա կողմից էկոլոգիական կուլտուրայի յուրացման գործընթացում, որը հիմնված է մարդու կողմից «հասարակություն-բնություն»

համակարգում իր տեղի և նրա դիալեկտիկական զարգացման իմացության վրա, և որպես հոգեկան արտակարգ երևույթ՝ անմիջապես կապված է սուբյեկտի սոցիալական գործունեության հետ:

Էկոլոգիական բնույթի գործողություններում մարդու մոտ ձևավորվում են աշխարհի մասին ընդհանուր պատկերացումներ, որոնց շնորհիվ նա ճշգրտում է իր տեղը բնության մեջ: Այս գործընթացում կարևոր դեր է խաղում անձի «մարդ-բնություն-հասարակություն» համակարգի մասին եղած հայացքների համակարգը, որտեղ վճռական և կարգավորող գործոնը անհատի արժեքային վերաբերմունքն է: Բնության և հասարակության միջև եղած ներդաշնակ հարաբերությունների ձևավորումը պահանջում է ներդաշնակ զարգացած անհատի դաստիարակությունը, որը իր հերթին պահանջում է աշխարհայացքի էկոլոգիականացում:

Էկոլոգիական դաստիարակության գործընթացի իրականացման համար կարևոր դեր է խաղում անձի ակտիվ կենսադիրքորոշումը, որը միայն բնության մասին եղած որոշակի հայացքների միասնությունը չէ, այլ գոյություն ունի հարցի առարկայական կողմը, և այն անառարկելիորեն առնչվում է մարդու անմիջական գործունեության հետ՝ կապված «մարդ-բնություն-հասարակություն» համակարգում եղած փոփոխությունների օպտիմալացման հետ:

Բնության պահպանության կարողությունների և հմտությունների ձևավորումը իր մեջ դաստիարակչական մեծ բովանդակություն է պարունակում:

Էկոլոգիական դաստիարակության կարևոր գործոն է համարվում նաև անձի կողմից բնության և հասարակության փոխհարաբերության՝ սոցիալ-էկոլոգիական իդեալի ըմբռնումը, որն իր հերթին ենթադրում է բարոյակամային որակների, համոզմունքների, բնության նկատմամբ պատասխանատվության ձևավորում: Էկոլոգիական դաստիարակության խնդիրը բազմասպեկտ է (բազմատեսանկյուն), և նրա բացահայտման մեթոդաբանական հիմքը համարվում է աշխարհայացքը: Հաշվի առնելով բնակլիմայական պայմանները, տեղային ավանդույթներն ու սովորույթները՝ էկոլոգիական գիտակցության ամբողջական ուսումնասիրումը և բնութագրումը հնարավորություն կտան ավելի

նպատակային կազմակերպել էկոլոգիական կրթությունը: Էկոլոգիական դաստիարակությունը՝ որպես դաստիարակության ընդհանուր համակարգի բաղադրամաս, ուղղված է դպրոցականների համակողմանի զարգացմանը և գիտական աշխարհայացքի ձևավորմանը, այնքանով, որ այն անձի գիտակցության և հոգևոր միասնության հիմքն է, քանի որ հայեցակարգային առումով մտնում է անձի գիտական աշխարհայացքի կառուցվաղքի մեջ: Անձի համակողմանի զարգացման բարդ հյուսվածքում գիտական աշխարհայացքի ձևավորումն ունի իր արանձնահատուկ դերը և հնարավորություն է տալիս նրան վերախմբավորելու մարդու բազմապիսի կենսափորձը սոցիալական ակտիվ կենսադիրքի շուրջ՝ գործնական, իմացական, հոգևոր և հուզագնահատողական նպատակով, ինչպես նաև որոշում է անձի ուղղվածության բնույթը:

Գիտական աշխարհայացքի ձևավորման գործընթացը՝ որպես դաստիարակության հիմք, կոչված է ամրապնդելու անհատի էկոլոգիական դաստիարակության բազան,կարելի է ասել, որ սոցիալ-էկոլոգիական իդեալը՝ որպես բնական միջավայր և հասարակության փոխազդեցության վերաբերյալ որոշակի կացություն, մտնում է անձի աշխարհայացքի բովանդակության մեջ:

Գիտական աշխարհայացքի տարրերի թվին են պատկանում արժեքային կողմնորոշումները: Այդպիսի սոցիալական նշանակություն է ստանում նաև վերաբերմունքը դեպի բնությունը և նրա արժեքավորումը, այդ թվում մարդու տարաբնույթ պահանջմունքների բավարարումը՝ իմացական, բարոյական, գեղագիտական, գործնական և այլն: Մարդու կենսափորձը և արժեքային կողմնորոշումները փոխկապակցված են և բնութագրում են մարդու հասունացումը, որպես անձ:

4.Էկոլոլոգիական վարքագծի դրսևորումները

Սովորողների, ընդհանրապես մարդու էկոլոգիական կուլտուրան նրա՝ բնության նկատմամբ հոգատար վերաբերմունքի պատասխանատվությունն է: Այն իրականություն դարձնելու համար դպրոցից, ընտանիքից, ողջ հասարակությունից պահանջվում է սովորողների հետ տանել ամենօրյա նպատակաուղղված աշխատանք: Առաջին հերթին

նրանց զինել համապատասխան գիտելիքներով: Օրինակ՝ գիտելիքներ՝ բնության և հասարակության կապի, գիտելիքներ՝ բնության գոյության անհրաժեշտության , գիտելիքներ՝ բնության հավասարակշռության պահպանության, գիտելիքներ՝ էկոլոգիական արժեքների, գիտելիքներ՝ բնությունից օգտվելու և բնությունը պահպանելու, բնական ռեսուրսների օգտագործման, բնական աղետների, էկոլոգիական լուսավորության և այլնի մասին: Այդ աշխատանքը կարող են կատարել կենսաբանության, աշխարհագրության, քիմիայի, ֆիզիկայի, ֆիզկուլտուրայի ուսուցիչները, ընդհանրապես ողջ մանկավարժական կոլեկտիվը:

Բնության հավասարակշռության պահպանության համար դպրոցականներն ամենուրեք պետք է պահպանեն առողջապահական մաքրություն. Չաղտոտեն գետերը, լճերը, աղբյուրները, հողերը, մթնոլորտը, շրջակա միջավայրը, չկտրեն մատղաշ ծառերը, այգիները, անտառներում կրակ չվառեն և այլն:

Ներկայումս խիստ անհրաժեշտ է դպրոցներում ունենալ հողերի, գետերի, լճերի մաքրությունը, բուսական, կենդանական աշխարհը պահպանող ջոկատները...Եվ յուրաքանչյուր ուս-տարի դպրոցների ղեկավարությանը ներկայացնել գրավոր հաշվետվություն՝ այդ ուղղությամբ իրենց կատարած աշխատանքների մասին:

Հասարակության զարգացման առաջընթացը ավելի ու ավելի նեծ մասշտաբով է վերափոխում բնությունը, մեծացնում մարդու իշխանությունը վերջինիս նկատմամբ: Սակայն միշտ չէ, որ նվաճելով բնությունը՝ մարդը մտահոգվում է դրա բացասական հետևանքներով, որոնք առայժմ մեծ չափերի են հասել: Դեռևս 70-ական թվականներին Էնգելսը կանխագուշակում էր. «Շատ էլ չհրապուրվենք բնության նկատմամբ մեր տարած հաղթանակներով: Յուրաքանչյուր այդպիսի տարած հաղթանակի համար նա մեզնից վրեժխնդիր է լինում: Այդ հաղթանակից յուրաքանչյուրը, առաջին հերթին, ունենում է այն հետևանքները, որ մենք նկատի ենք առել, բայց երկրորդ ու երրորդ հերթին ունենում է միանգամայն այլ, չնախատեսված հետևանքներ, որոնք շատ հաճախ ոչնչացնում են առաջինների նշանակությունը... Եվ այսպես՝ յուրաքանչյուր քայլափոխում փաստերը մեզ հիշեցնում են, որ մենք ամենևին էլ բնության վրա չենք իշխում այնպես, ինչպես նվաճողն է իշխում օտար ժողովրդի վրա...»:

Ոռոգելով անապատները, չորացնելով ճահիճները, փոխելով գետերի հոսանքը, մարդը փոխում է նաև կյանքի կլիմայական պայմանները: Կլիմայի վրա անուղղակի ազդեցություն է թողնում նաև արտադրությունը, քանի որ նավթի, ածխի ու տորֆի այրման ժամանակ տարեկան մթնոլորտ է բարձրանում մոտ 1.5 միլիարդ տոննա ածխածին, իսկ օդում ածխածնի պարունակությունից է կախված երկրի մակերեսի ջերմությունը: Օդը, գետերը, ծովերը գնալով ավելի մեծ չափերով են աղտոտվում, հողը թունավորվում է քիմիկատներով, անտառներն ու կենդանական աշխարհը կործանվում են մոնոպոլյաների տիրապետության հետևանքով: Արդյունաբերական ձեռնարկությունները գետերը, լճերն ու ծովերն են թափում հարյուրհազարավոր տոննա քիմիական զանազան նյութեր ու նավթամթերքներ: Դրա հետևանքով ջրերը աստիճանաբար կորցնում են թթվածինը, որը հանգեցնում է կենդանական աշխարհի ոչնչացմանը:

Օդի, ջրի աղտոտվելը, արդյունաբերական մնացուկները, ռադիոակտիվ նյութերն ու այլ նյութեր սպառնալիք են ստեղծում մարդու գոյության համար: Մարդը պետք է ապրի բնության հետ լիակատար համաձայնության և համերաշխության մեջ, պետք է զգուշանա բնության չափազանց լիակատար և ամբողջական վերափոխումից և օգտագործումից, քանի որ դա կարող է հետագայում բացասաբար անդրադառնալ նրա էկոլոգիայի վրա:

Յուրաքանչյուր մարդ պատասխանատվություն է կրում բնության պահպանման համար, քանի որ ամեն մեկը իր հնարավորությունների և ուժերի սահմաններում կարող է աջակցել բնության թեկուզ շատ աննշան մի անկյան պահպանմանը և բազմացմանը: Վերջին հաշվով մարդկանց անհատական ջանքերի գումարից է կախված բնության պահպանումը և մարդու գոյության համար բնական միջավայրի ապահովումը: Իրավացի է ասված, որ մադու համար բնությունը և արհեստանոց է, և տաճար,իսկ մարդը նրանում և ակտիվ աշխատավոր է, և հրապուրված պաշտող: Նվաճելով բնությունը մարդը պետք է ամեն կերպ ձգտի ոչ թե ոչնչացնել բնությունը, այլ իրականացնել մարդկության երազանքը՝ լիակատար ներդաշնակության մեջ մտնել բնության հետ:

Գյոթեն ասել է. «Բնությունը չի սիրում կատակներ, այն միշտ ճշմարիտ է, միշտ լուրջ, նա միշտ ճիշտ է, սխալները և թյուրիմացությունները գալիս են մարդուց»:

Բնութագրելով մարդու հարաբերությունը բնության նկատմամբ, մարդկանց նկատմամբ, ինքն իր նկարմամբ՝ հետազոտողները հատուկ նշել են, որ էկոլոգիական կուլտուրա, գիտակցություն, զգացմունքներ և վարքագիծ ունեցող մարդկանց մոտ կա ներդաշնակություն, իսկ նրանց վերաբերմունքը շրջակա միջավայրի նկատմամբ ներծծված է մարդասիրությամբ:

Դպրոցականների էկոլոգիական կուլտուրայի էությունը վերլուծելիս պետք է առաջնորդվել նրանով, որ այն հանդիսանում է մարդկային կուլտուրայի տեսակետներից մեկը:Ժամանակակից գիտական գրականության մեջ «կուլտուրա» հասկացությունը ընդունվում է որպես մարդու գոյության , կենսագործունեության միջոց: Դա նշանակում է, որ էկոլոգիական կուլտուրան մարդու գոյության միջոց է, նրա կենցաղը՝ էկոլոգիական առումով:

Վ.Վ. Մատվեևի կողմից կուլտուրայի տեսակների դասակարգումը ցույց է տալիս, որ էկոլոգիական կուլտուրան ունի այն էական գծերը, որն ունի կուլտուրան ընդհանրապես՝ որպես սոցիալական երևույթ, միևնույն ժամանակ այն համարվում է անձի ինտեգրալ բնութագիրը: Էկոլոգիական կուլտուրան, ինչպես և կուլտուրայի այլ տեսակները, իրենից ներկայացնում է նյութական և հոգևոր արժեքների հանրագումար՝ մարդու կողմից էկոլոգիական կրթության բնագավառում ստեղծված գիտելիքնեի, կարողությունների համակարգ: Այլ հեղինակների կարծիքով (Ա.Ն. Զախլեբնի, Վ.Դ. Բոնդարենկո), «էկոլոգիական կուլտուրան հանդես է գալիս որպես անձի ամբողջական որակներից մեկը, որը պայմանավորում է նրա կենսագործունեության ուղղվածությունը:

Էկոլոգիական կուլտուրայի բնութագրման համար՝ որպես անձի ընդհանուր կուլտուրայի բաղադրամաս, կարևոր նշանակություն ունեն դպրոցականների էկոլոգիական կուլտուրայի դաստիարակման հայեցակարգերը՝ մշակված Մ.Դ. Լիխաչովի, Լ.Թ. Ասատրյանի, Փ.Ա. Սարգսյանի և այլոց կողմից, ըստ որի՝ էկոլոգիական կուլտուրան անձնավորության նորագոյացումներից է, որը ծնվում ու զարգանում է կենսագործունեության դրդապատճառային, մտածողության և հուզական ոլորտում: Ելնելով «էկոլոգիական կուլտուրա» հասկացության տարբեր բնութագրումներից՝ մենք գտնում ենք, որ էկոլոգիական կուլտուրայի հիմքը համարվում է անձի էկոլոգիական ուղղվածությունը և

նրա հասարակական կուլտուրայի մի մասը: Այն իրենից ներկայացնում է ամբողջական համակարգ, որը բաղկացած է հետևյալ փոխկապակցված տարրերից.

- գիտելիքների համակարգ (բնագիտական, արժեքային, գործնական),
- էկոլոգիական գիտակցություն,
-
- համոզմունքների համակարգ, որը արտացոլում է էկոլոգիական կուլտուրայի

աշխարհայացքային մակարդակը,

- գործնական կարողությունների և հմտությունների համակարգը,
- էկոլոգիական վարքագծի կուլտուրա:

Դա նշանակում է նրանց մոտ խնայողապաշտպանական վերաբերմունք դաստիարակել բնության նկատմամբ, գաղափար տալ նրանց բնության պահպանման անհրաժեշտության և հարստացման մասին: Հանրապետական դպրոցի առջև խնդիր է դրված հաղթահարել էկոլոգիական դաստիարակության բնագավառում տեղ գտած թերությունները, որպեսզի աճող սերունդը սովորի բնության հետ ապրել ներդաշնակ: Առաջնահերթ հարցը այս խնդրում վերաբերում է բնության նկատմամբ գիտական գիտելիքների ձերքբերման հարցին, բնությունը միասնության և բազմատեսակության մեջ տեսնելու հարցին: Այս ամենին հասնելու համար սովորողների մոտ պետք է դաստիարակել հայրենասիրության, հուզականության, կարեկցանքի, գեղեցիկը զգալու զգացմունքներ՝ նրանց հոգեկան ներաշխարհի վրա ներազդելու միջոցով:

5. Բնապահպանական խնդիրներ Հայաստանում

«Էկոլուրը» տեղեկացնում է, որ այս օրերին Ջերմուկում ոչնչացվում են այգու ծառերը. Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինն այս օրերին հաշվարկում է Ադրբեջանի կողմից սանձազերծած լայնածավալ ագրեսիայի ընթացքում՝ սեպտեմբերի 12-15-ը, Ջերմուկի վարչական տարածքում հրետակոծության հետևանքով հրդեհված անտառային

տարածքներում բնությանը հասցված վնասի չափը: Այս մասին տեղեկացնում է Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը: Տեսչական մարմնի կողմից հարուցված վարչական վարույթի շրջանակում սեպտեմբերի 19-20-ը տեսչական մարմնի աշխատակիցներն ԱԻՆ-ի, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի, ՏԻՄ ներկայացուցիչների ներգրավվածությամբ զննություն են իրականացրել Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքում: Ըստ պաշտոնական հաղորդագրության՝ նյութերը փոխանցվելու են իրավապահ մարմիններին:

Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի պոչհանքերը պարունակում են քիմիկատներ, որոնք օգտագործվում են հանքանյութի հարստացման ընթացքում: Բացի այդ, պոչերում առկա են հանքանյութին բնորոշ բոլոր մետաղները՝ պղինձ, մոլիբդեն, ինչպես նաեւ այնպիսի խառնուրդներ, ինչպես ռենիում, սելեն, տելլուր, բիսմուտ: Այս բոլոր մետաղներն առողջության եւ շրջակա միջավայրի համար համարվում են տոքսիկ: Սա էկոլոգիական լուրջ խնդիր է, քանի որ լինում է արտահոսք Ողջի գետ: Ռիսկի տակ է ամենից առաջ Կապանի բնակչությունը, քանի որ Ողջի գետը հոսում է քաղաքի միջով և նաև այն համայնքներով, որոնց հողերը ոռոգվում են Ողջիի ջրերով:

Սևանի Էկոլոգիական խնդիրները

Ջրային ռեսուրսների օգտագործումը ՀՀ-ում նույնպես առաջացնում է որոշակի գեոէկոլոգիական հետևանքներ: Դրանցից են ջրային պաշարների քանական և որական սպառումը (Սևանա լիճ), երկրոդային աղակալումը՝ արտեզյան ավազանի օգտագործումից, գետերի ջերմային աղտոտումը ՋրԷկ-ների գործարկման հետևանքով: ՋրԷկ-ները նաև ազդում են գետերի կեսնսաբազմազանության վրա՝ նվազեցնելով դրա տեսակային և քանակական կազմը: ՀՀ-ում գետերի աղոտոտվում են ոչ միայն արդյունաբերական, այլ նաև կենցաղային թափոններով: Ընդ որում կենցաղային թափոններով աղտոտման աշխարհագրությունն ավելի մեծ է: Միաժամանակ ՀՀ գետերը աղտոտվում են միջին և ստորին հոսաքներում: Ջրօգտագործման ոլորտում առանձնահուտկ հիմնախնդիր է հանդիսանում Սևանա լճի հիմնախնդիրը: Սևանա լճի հիմնախնդիրը: Սևանա լիճը ՀՀ քաղցրահամ ջրի ամենամեծ պաշարն է: Լճի մեկ լիտրում պարունակվում է 0.7 գրամ աղ: Լիճն ունի տեկտոնահրաբխային ծագում: Գտվում է ծովի մակարդակից մոտ 1900 մ բացարձակ բարձրության վրա: Լճի հայելու

մակերեսը 1250 քկմ, է ծավալը 34 մլրդ խմ (54 մլրդ խմ մինչև մակարդակի իջեցումը): Սևան է թափվում 28 գետ ու գետակ և դուրս է գալիս միայն Հրազդանը: Բաղկացած է երկու մասից՝ Մեծ և Փոքր Սևաններից: Լճի առավելագույն խորությունը մոտ 81 մ է, որը գտնվում է Փոքր Սևանում: «Սևանի հիմնախնդիր» հասկացությունը գիտական շրջանառության մեջ է դրվել 20-րդ դարասկզբին, երբ ակնհայտ էին դարձել Սևանի դարավոր ջրային պաշարների օգտագործման հնարավորությունները: Սկզբում հիմնախնդիրը քննարկվում էր զուտ ոռոգչական հնարավորությունների տեսանկյունից առանց խախտելու լճի հոսքի բնական ռեժիմը: 1910-ական թթ. սկսած նրան սկզբունքային նոր բովանդակություն է հաղորդվում: Հիմնավորվում է Սևանի օգտագործումը համալիր՝ ոռոգման և էլեկտրաէներգիայի արտադրության տեսանկյունից՝ իջեցնելով ջրի մակարդակը և կրճատելով գոլորշացման մակերեսը: 1920-ականներին մշակվեց լճի օգտագործման տեխնիկական նախագիծ: Մշակված և հաստատված սխեման հայտնի դարձավ «Սևան-Հրազդան ոռոգչա-էներգետիկական համալիր» անունով: Նախատեսվում էր նախագիծն իրականացնել երկու փուլով: Առաջին փուլում, որը պետք է տևեր 50 տարի, ավարտվելու էր լճի մակարդակի արհեստական իջեցումը, որն իջնելու էր 50 մ-ով, իսկ ջրային հայելու մակերեսը կրճատվելու էր 7 անգամ (Մեծ Սևանը չորանալու էր լիովին): Երկրորդ փուլում դադարում էր ջրի դարավոր պաշարների օգտագործումը և հաստատվում է լճի նոր, կայուն ջրային հաշվեկշիռը՝ 700 մլն խմ արտահոսքով: Ավարտվելու էր Հրազդան գետի վրա էկլեկտրակայանների կասկադի և գետից սկզիբ առնող ջրանցքների կառուցումը: Շատ բարձր էր սխեմայի իրականացման տնտեսական արդյունավետությունը: Արարատյան դաշտի և նախալեռնային շրջանների ոռոգելի հողատարածություններն ավելանում էին մոտ 100 հազ. հա-ով: Հայաստանը ստանում է տարեկան ավելի քան 2մլրդ կվտ/ժ էլեկտրաէներգիա: Սխեմայի հաշվարկային ցուցանիշներն այնքան բարձր էին, որ փորձագետները Սևան-Հրազդան համալիրը գնահատեցին որպես «խորհրդային էնետգետիկայի մարգարտահատիկ»: Այդ ամենով հանդերձ այն ժամանակ դեռևս ուրվագծվում էին բնական միջավայրի համար սխեմայի իրականացման հնարավոր բացասական հետևանքները: Ակնհայտ էր, որ լճի բնական ռեժիմի փոփոխությունը հանգեցնելու է լճի և նրա ավազանի էկոլոգիական հավասակաշռության խախտման:Նախատեսվում է սխեմայի էներգետիկական մասի, այսինքն Հրազդանի ջրաէլեկտրակայանների կասկադի շինարարությունն ավարտել 13-14 տարում՝ 1933-47 թթ.,

սակայն 2-րդ Համաշխարհային պատերազմը խանգարեց դրան: Շինարարությունն ավարտվեց 1962 թ.: Խախտվեցին նաև ոռոգիչ ջրանցքների և ոռոգովի տարածքների յուրացման ժամկետները: Որոշվեց դադարեցնել ջրի դարավոր պաշարների օգտագործումը և ջրի մակարդակը պահպանել բնականին մոտ վիճակում: Պարզվեց, որ լճի մակարդակի իջեցումը կարելի է դադարեցնել 1896 մ բացարձակ բարձրության վրա, այսինքն բնական վիճակից 19-20 մ ցած: Դա նշանակում էր, որ Սևանը կարող էր տալ 170 մլն խմ ջուր, որը չէր կարողանա ապահովել ոչ ՋԷԿ-ների աշխատանքը, ոչ էլ ոռոգման համար անհրաժեշտ ջրի ծավալը: Որոշվեց Սևան ուղղել հարակից գետերի հոսքի մի մասը, օգտագործել Արարատյան դաշտի արտեզյան ավազանի հնարավորությունները, կառուցել նոր ջրամբարներ, իսկ էլեկտրաէնեգիայի պակասը լրացնել նոր կառուցվող ՋԷԿ-երի հաշվին: Սևանա լճի բանպահպանական խնդիրը շատ ավելի բարդ ու բազմաբովանդակ է: Այն ներառում է աշխարհագրական թաղանթի բոլոր ոլորտների փոխհարաբերությունների բոլոր կողմերը: Կատարվեցին նոր հետզոտություններ, ընդունվեց ՀՀ օրենք «Օրենք Սևանա լճի» մասին (2001թ.), որը Սևանա լիճը համարում է հոգևոր արժեք քաղցրահամ ջրի շտեմարան, սահմանում է լճի էկոհամակարգի վերականգման ու բնականոն զարգացման, նրա բնական ռեսուրսների վերարտադրության ու օգատործման քաղաքականության իրավական ու տնտեսական հիմունքները: Լճի դարավոր ջրային պաշարների օգտագործման հետևանքով ստեղծվել է հետևյալ էկոլոգիական իրավիճակը. Փոխվել է ջրի որակը: Այդ փոփոխության պատճառ է դարձել գյուղատնտեսական գործունեությունը, կենցաղային և արտադրական թափոնները: Ներհոսող ջրի հանքայնությունը աճել է 1.5 անգամ: Նախկինում լճի ջրում հանքային ազոտը գրեթե բացակայում էր, առկա էր հանքայի ֆոսֆորի մեծ քանակություն: Ներկայումս ազոտը նկատվում է ամենուրեք, ֆոսֆորը նվազել է: Լճի մակերեսի ջրի տարեկան տատանումների ամպլիտուդան աճել է: Ջրափոխանակյությունը Մեծ և Փոքր Սևանների միջև նվազել է: Ջրի լուսաթափանցելիության միջին տարեկանը սկզբում եղել է 12մ, այժմ 4.5 մ: Ֆիտոպլանկտոնային համակարգը կրել է կառուցվածքային և ֆունկցիոնալ փոփոխություններ: Մինչ լճի մակարդակի անկումը կեսանբազազանությունը հասնում էր մինչև 40-ի ներկայումս գերազանցում է 100-ը: Լայնորեն տարածվել են դիատոմները, կանաչ և կապտականաչավուն ջրիմուռները: Լճի մակարդակի իջեցումը հանգեցրել է հատակային մակրոֆիտների կտրուկ նվազման՝ շուրջ 10 անգամ: Զոոպլակտոնը 60-ականներից հետո աճել է: Զոոբենթոսի

կեսնզանգավածը նույնպես աճել է: Սաղմոնզագիների ընտանիքին է պատկանում Սևանի իշխանի էնդեմիկ տեսակը իր 4 ենթատեսակներով՝ բոջակ, ձմեռային բախտակ, գեղարքունի, ամառային բախտակ: Իջան գետերի էրոզիոն բազիսները: Պարզ դարձավ որ ջրերից ազատված տարածքների հողերը աղքատ են հուսով, ավզուտային են և պիտանի չեն գյուղատնտեսական օգտագործման համար: Լճի ափամերձ գոտում չորացավ շուրջ 10 հազ. հա ճահճային տարածքներ իրենց յուրահատուկ կենսաբազմազանությամբ հանդերձ: Սևանի ավազանում նկարագրված են 1600 բարձրակարգ բույսերի տեսակներ, 36 տեսակ կաթանսուններ, 267 տեսակ թռչուններ, 4 երկենցաղներ, 18 տեսակ երկենցաղներ 9 տեսակի ձկներ: Գիլի ճահաճային տարածքի չորացման հետևանքով 167 տեսակի էնդեմիկ և միգրացիա կատարող թռչնատեսակներից մնացել է 18 տեսակ: Ներկայումս ստեղծվել է ՀՀ նախագահին կից Սևանի հանձնաժողովը, որը կարգավորում է Սևանի հետ կապված բոլոր հարցերը: Սկսվել են Սևանա լճի ջրի մարդակի բարձրացման աշխատանքները: Նախատեսվում է լճի հայելու մակարդակը հասնցել 1903.5 մ բարձրության: Մակարդակի բարձրացման հետ ի հայտ են գալիս նոր հիմնախնդիր՝ լճի ափերը պատրաստ չեն մակարդակի բարձրացմանը՝ առակ է հսկայական քանակության բուսազանգված, հակտապես անտառ, և շինություններ: Ներկայումս Սևանա լճի ավազանն օգտագործվում է նաև որպես ռեկրեացիոն գոտի: Այստեղ 1978 թ. ստեղծվել է «Սևան» ազգային պարկը, որի տարածքում առանձնացվում են հետևյալ ֆունկցիոնալ գոտիեր՝ արգելոցային, ռեկրեացիոն, կլիմայաբուժական, հանգստի և զբոսաշրջության, ճանաչողական զբոսաշրջության, լեռնադահուկային սպորտի տարածքներ և այլն: Սևանա լիճը ՀՀ համար ունի նաև գեոպալիտիական մեծ նշանակություն՝ որպես տարածաշրջանում քաղացարահամ ջրի միակ հսկայական աղբյուր:

Եզրակացություն

Այսպիսով՝ էկոլոգիական դաստիարակությունը անմիջապես կախված է էկոլոգիական գիտակցության, էկոլոգիական կուլտուրայի և գիտելիքների մակարդակից: Էկոլոգիական դաստիարակությունը չափանիշ է համարվում մարդու գործնական և հոգատար վերաբերմունքը շրջակա միջավայրի նկատմամբ և այդ վերաբերմունքի համապատասխանեցումը հասարակական նորմերին:

Նպատակաուղղված մանկավարժական գործընթացի պայմաններում էկոլոգիապես դաստիարակված մարդու ձևավորումը ենթադրում է բնական և սոցիալական միջավայրի գործոնների մասին գիտական գիտելիքների օրգանական միասնություն :

Մենք, այժմ ապրում են էկոլոգիական այնպիսի ժամանակաշրջանում, ուր ամեն պահի կարելի է սպասել էկոլոգիական աղետի: Դա գլոբալ խնդիր է և վերաբերում է բոլոր ազգերին:

Հայաստանում առկա էկոլոգիական խնդիրները հասնում են մեծ չափերի:Որպես օրինակ բերենք այն փաստը, որ ընդհանուր տվյալներով յուրաքանչյուր մարդու հասնում է շատ քիչ կանաչ տարածք: Այդ տարածքները ոմանք օգտագործում են սեփական նպատակների համար, հաշվի չառնելով դրա հետագա վտանգավորությունը: Ոչնչացնում են զբոսայգիները, այն դարձնելով սրճարաններ կամ զվարճանքի վայրեր: Կանաչ տարածքների բացակայության հետևանքով է, որ հիվանդությունների քանակը չափից դուրս շատացել է, ինչպես նաև ոչնչանում են այդ տարածքներում ապրող կենդանիների տեսակները:

Էկոլոգիական դաստիարակության գործընթացի հիմքում ընկած են սովորողների հոգեկան որակները, բնության նկատմամբ հետաքրքրությունը, արժեքային դիրքորոշումներն ու հարաբերությունները:

Մարդկության ողջ պատմությունն ընթացել է բնության գաղտնիքների մեջ թափանցելու բուռն ցանկության դրսևորումամբ ու բնության մեջ իշխող օրինաչափությունների բացահայտման բարենպաստ ուղիների որոնումներով, սակայն ներկա ժամանակահատվածն ամենանշանակալիցն է, քանզի քաղաքակրթությունը կանգնած է երկընտրանքի առջև. կամ

պահպանել տնտեսության զարգացման ձևավորված սկզբունքները՝ բնական պաշարների սպառման ու Երկրի աշխարհագրական թաղանթի աստիճանական վատթարացման պայմաններում, ինչն ի վերջո կհանգեցնի համամոլորակային էկոլոգիական աղետի, կամ մշակել նոր տեսակի քաղաքակրթության անցման մեխանիզմ, որի առանցքն է այն սկզբունքը, որ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի հիմքում պետք է էկոլոգիան, բնապահպանական հիմնախնդիրները դրվեն։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ամիրջանյան Յու.Ա., Մանկավարժություն, Երևան, 2005թ

2. Ասատրյան Լ.Թ, Ավանեսյան Լ.Գ., Սահակյան Ա.Ս., Էկոլոգիական դաստիարակության համակարգը ավագ դպրոցում, Երևան, 2003թ

3. Ասատրյան Լ.Թ., Էկոլոգիական դաստիարակության հիմունքները, Երևան

4. Հովսեփյան , Մարուխյան , “Անձի էկոլոգիական կուլտուրա”, Երևան, 2005թ

5. Աթայան Կ.Ի., Կենսոլորտում ընթացող ֆիզիկական երևույթներ, 2010թ.,

6. econews.am

7. ecolur.org